

# ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ» ԼԵԳԵՆԴԸ

(Մի ֆանի աղբյուրների և զուգահեռների մասին)

ՍԵԼԻՔՍԵՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական կյանքում XX դարի սկիզբը դառնում է հանճարի բացահայտման ժամանակաշրջան: Պատմության և մեծ տնտեսականության այն հանդիպումն էր սա, երբ բուռն, բեկումնային, արյունահեղ իրադարձությունները հարազատ ժողովրդի ճակատագրում լինում են վճռորոշ: Բանաստեղծի համար ներդաշնակվում են անձնական-աղբյուրն-համամարդկային խնդիրները, քաղաքականությունն արտացոլվում է լայն, խոր և բազմակողմանի մտազուգորդություններով, հեռավոր և մոտիկ անցյալի ժողովրդական կենսափորձից քաղած դասերով, ներկայի գեղարվեստական անդրադարձմանը հաղորդելով բազմաժամանակյա և ապագայական մեկնաբանություն:

Դարասկզբին Հովհաննես Թումանյանի պոեզիայում դիտարկվում է մի գլխավոր օրինաչափություն՝ ժողովրդի համակողմանի պանծացում, ժողովրդական հոգեբանության «երկրաբանական շերտերի» կենսոսնակության բացահայտում և բռնության, բռնակալության դեմ ժողովրդական պայքարի քննություն: Ժամանակակից բռնակալության դեմ պայքարի կոչերով է հանդես դալիս բանաստեղծը և հալածվում է, կալանավորվում: Ամիսներ շարունակ Պետերբուրգում կալանքի մեջ գտնվելով («Դաշնակցության գործը») ցարական ռեժիմը տապալելու տրամադրություններ սերմանելու համար, նա մեծ ճիգ ու ջանքերի գնով ազատվում է: Այդ ընթացքում լայն շփումներ է ունենում Պետերբուրգի և Մոսկվայի գրական-քաղաքական միջավայրերի հետ, զբաղվում զուտ ազգային հոգսերով: Սա այն շրջանն էր, երբ նա ընտրվում է հայ գրողների Կովկասյան ընկերության նախագահ: Կալանքից ազատվելուց հետո, 1912 թ., որն ի դեպ ստեղծագործական առումով բեղմնավոր տարի չեղավ, գրում է «Աղավնու վանքը» ժողովրդական ավանդությունը և վերջնական ավարտի է հասցնում «Քաջ Նաղար» հեքիաթը: Առաջինը՝ պատմական հիմք ունի, նրա գլխավոր դորժող անձերից մեկը՝ հայր Օհանը, մեր կարծիքով ունեցել է իր նախատիպը, իսկ բռնակալը՝ Լենկթեմուրն է, որոշակիորեն առնչված Հայաստանին: «Քաջ Նաղարում» բռնակալը և բախտախնդիրը դավեշտականացված ընդհանրացում է, բայց երկու դեպքում էլ, ինչպես գրում է էդվարդ Ջրբաշյանը, «պատմականը այստեղ ինքնուրույն նշանակություն չունի: Այն ենթարկված է սիմվոլիկ ընդհանրացմանը և ֆանտաստիկ սյուժեին», սրելով «ամենից առաջ բռնակալության դեմ արդարության հաղթանակի, հայրենասիրության և հումանիզմի ամենազորուծի գաղափարը»<sup>1</sup>:

«Աղավնու վանքի» մասին լեգենդն ունի ավելի քան 400-ամյա պատմություն և շրջեշրջ ապրելով, հասել էր XVIII դար ու վերջապես գրի առնվել: Այն լույս է ընծայվել Կոստանդնուպոլսում, 1735 թ., կաթողիկոս

<sup>1</sup> Է. Էդվարդ Ջրբաշյան. Թումանյանի բալլադները. Երևան, 1969, էջ 121, 123:

Ղազար Զահկեցու կողմից՝ «Գիրք աստվածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի» գրքում (էջ 672—673)։ Միքայել Չամչյանն էլ իր «Պատմութիւն Հայոցի» Գ հատորի<sup>2</sup> 880—882-րդ էջերում է տեղ տվել այդ ավանդութիւնը։ Դրան անդրադարձել է Ավդուստ ֆոն Հաքստհաուզենը<sup>3</sup>։ Այն թարգմանվել ու տպագրվել է 1872 թ. «...Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է Հայս ի Վիրս» վերնագրով։ «Փշրանքներում» 1892 թ. դրան տեղ է տվել Գարեգին Հովսեփյանը։ Այդ առասպելին անդրադարձել է նաև Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» աշխատութիւն մեջ<sup>4</sup>։ Չափազանց լայն է նրա աշխարհագրութիւնը՝ Հին նախիջևան, Սյունիք, Արցախ, Գանձակ, Մոկս, Սևանի ավազան... Պատմվել է տեղական բարբառներով։ Ունի տարբերակներ։ Տարբերակներից երկուսը, որոնց մերձենում, գրեթե նույնանում է թումանյանական մշակումը, կոչվում են «Մարդազաւնյաց կամ Հազարփրկիչ» և «Հովհանավանք»։

1969 թ. Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականութիւն ինստիտուտը հրատարակեց Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գիրքը։ Ահա այդտեղ, ի շարս այլ ավանդութիւնների, տպագրված են նաև Աղավնու վանքի մասին լեգենդի տարբերակները։ Դրանք բոլորը Արամ Ղանալանյանը դասել է այլազգի բնականների, հայրենի հերոսների և նահատակների մասին պատմող ավանդութիւնների շարքը։

Ավելորդ չէ հիշել, որ «Աղավնու վանք» գրելուց դեռևս տասը տարի առաջ, 1902 թ. Հ. Թումանյանն անդրադարձել է Լենկթեմուրի կերպարին։ Մարիամ Թումանյանին գրած նամակում բռնակալը հանդես է գալիս որպես պատերազմի դաշտից փախած և պարտված մեկը, որը թաքնվել է մի քարի տակ և ապա՝ մոխրից համառութիւն և դժվարութիւնը հաղթահարելու օրինակ վերցնելով՝ կարողացել է հավաքել իր ցրված զորքը և հաղթանակել։ Այստեղ, ինչ խոսք, խնդիրն այլ է, հուսահատվողին կամքի կոչելն է, սակայն պակաս կարևոր չէ բռնակալի նախորդ վիճակի նկարագրութիւնը։ Այնպես որ, Հովհաննես Թումանյանի հետաքրքրութիւնների դաշտում Լենկթեմուրի գոյութիւնը պատահական մի բան չէ, իսկ լեգենդում պատմական ժամանակաշրջանը XIV դարն է, բռնակալը և նվաճողը՝ Լենկթեմուրը, որն ավերակ դարձրեց նաև Հայաստանի շատ շրջաններ։ Ժողովրդի փրկութիւն վայրը սրբատեղին է՝ վանքը, ժողովրդի փրկարարը՝ վեմն հավատի, հրաշագործ և իմաստուն քահանա հայր Օհանը։ Գերեզմարված ժողովուրդը խորհրդանշված է աղավնու փրկարար փոխակերպմամբ, թռիչքով և անմեղութիւնը։ Այս ամենի պտույտը Չարի ու Բարու զոտեմարտում ավարտվում է Բարու հաղթանակով։

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,  
Անօրենն եկավ, եկավ ու եկավ,  
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,  
Փաթթեց, պատեց, ինչպես վիշապ-օձ,  
Կանգնեց Սևանա ափին հովասուն,  
Էնտեղ, ուր ուշքը ու միտքն Աստուծոյ՝  
Անհունն է խորհում, մեռնեմ իր զորքին,  
Օհաննա վանքը ծովի եզերքին։

Հեղինակային վերաբերմունքը հստակված և բևեռված է, սուր ծայրով մխրճված բռնակալի սրտի մեջ։ Նրա «հուրն ու սուր», «վիշապ-օձ» զորքը հակադրված է հավատի զորքին և զորահրամանատար հայր Օհանին։ Մերու-

<sup>2</sup> Վենետիկ, 1786։

<sup>3</sup> Завказказский край. Ч. I, СПб., 1857, с. 159—160.

<sup>4</sup> Վաղարշապատ, 1895։



նին, որ աղոթք էր անում «էն վանքում, հայոց ազգին պահապան», ներանձնացած է։ Նրա զրույցն Անհունի հետ է։ Նրա աղոթքն ուղղված է իր հոգուն, իր ազգին, աշխարհին։ Եվ հանկարծ մարդասիրական, հայրենասիրական, տիեզերական այս արարողությունը խանգարվում, խոռվվում է անհավատ, անօրեն, դաժան, բռնակալ մարդու կողմից։ Սա աշխարհամերժ կյանքով ապրողի հոգեվիճակն է, որի գործունեության ասպարեզը կարծես սպառվում է աղոթքով, այլ բողոքող, չհանդուրժող հոգու պայքարի ձև է՝ աղոթելով կամենալ աշխարհը հանել աններդաշնակությունից և դրան զուգահեռ խորհել ազգի ճակատագրի մասին, նրա պահպանության մասին և նրան տանել բարոյական կատարելագործման ճանապարհով։ Այդպիսով իսկ մինչև Լենկթեմուրին հանդիպելը, ծերունին արդեն մի տեսակ գաղափարապես նախապատրաստված էր պայքարի՝ ընդդեմ լարի, անբարոյականի, բռնակալի։ Եվ նրա ներքին պայքարը, որն օրինակ էր հավատացյալ հոտի համար, չէր կրում նեղ հայկական բնույթ, այլ՝ համամարդկային էր։

Դառնացած, մարդուց ու կյանքից դժգոհ հայր Օհանը, չհամակերպվելով պարտադրված այդ վիճակին, ցանկանում է հեռանալ լարից, իր հրաշագործությամբ ոչնչացնելով լարը։

Իշավ Սեանա երեսը կապույտ,  
Ու թրթմնշալով, միամիտ, անփույթ,  
էն վետ-վետ, ծրփուն ջրերի վրա,  
Ծամաք ոտներով դընում էր ահա։

Եվ եթե Հովհաննես Թումանյանն ասում է՝ միամիտ, անփույթ, դա չի նշանակում, որ անօրեն մարդու անօրեն գործից բողոքող արդար ծերունին է միամիտը, ոչ, պարզապես նա իր հրաշքն է ներկայացնում շատ սովորական, մի տեսակ հանդարտ, անտարբեր, դրանով իսկ սաստկացնելով հրաշքի ներգործության հզորությունը բռնակալների վրա։ Սա ևս հոգեբանական նրբերանգ է, որ բանաստեղծը կիրառել է իր հերոսին կերտելիս։ Սա վեհի, արդարամիտի, իմաստունի, ժողովրդի առաջնորդի և փրկարարի առաջ-ժամ առաջին հրաշքն է, որի աստվածաշնչային հիմքը հանրահայտ է։ Հայր Օհանի այս հրաշքը ցնցում, սարսափեցնում է Լենկթեմուրին, ծնկի բերում։ Անհավատության առաջին պարտությունն է սա՝ հավատից։ Ահաբեկված բռնակալը դիմում է իր ցեղին հատուկ եղանակի՝ կաշառմանը, իր կողմը գրավելուն, որպեսզի ելք գտնի պարտությունից։

— Ի՞նչ ես ուզում դու, ո՞վ սուրբ ակեր,  
Գանձ, իշխանություն, թե՞ կյանք փառավոր ...

Հայր Օհանը շատ է ուժեղ և շատ է բարձր այդ մակարդակից, նրա աշխարհայացքը, ըմբռնումները շատ են հեռու գանձից, իշխանությունից, շվայտ, զեղիս կյանքից։ Նա ժողովրդի զավակ է և ժողովրդի փրկարար։ Բնականաբար՝ պիտի կամենա ամենագլխավորը՝ ժողովրդի փրկությունը։ Պահանջելով իր ժողովրդի ազատությունը, կամենում է, որպեսզի նա աղատ ապրի «էս լեն աշխարհում, արևի տակին»։ Հեղինակը նորից տալիս է իր բնութագրականը. «Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին»։ Երկու բևեռների ուժերն էլ վիթխարի են՝ սուրբ մարդ և մեծ ավազակ։ Բարությունն ու Չարությունը դեմադրեմ հակադրվում են իրար։ Եվ եթե «Քաջ նազարում» բռնակալը, որ բախտախնդիր է, պատեհապաշտ և հիմար, «մինչև էսօր էլ քեֆ է անում... ու ծիծաղում աշխարհի վրա», ապա «Աղավնու վանքում» նրա տարատեսակը պարտվում է հայրենասեր իմաստունի խելքից, հնարամտությունից, հրաշքից։ Սրանք իրականության ժողովրդական մեկնաբանություններ են, անցած ազգային մեծ բանաստեղծի գեղարվեստական հնոցով, որոնց կողքին, սակայն, թումանյանական աշխարհում կա նաև երրորդ ըմբռնում՝ Սասունցի

Դավթի Թուր Կայծակին, այսինքն՝ թշնամու դեմ կենաց և մահու կռիվ մղելը: Ասում ենք, ցույց տալու համար, որ մեր ազգային մեծ բանաստեղծը ժողովրդին կրթել է խորն ու համակողմանիորեն, այդպես համակողմանիորեն էլ ճանաչելով նրան:

«Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը,— գրել է հանճարեղ լուսնեցին:— Ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով, Կենսունակությունն էլ, որ ասում եմ, ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՛ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ ի՞նչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ փառերից էլ կառող է Արաբիայում զավակներ հառուցեցել և դաշաբեռում ցրված ռուսներին՝ կենդանի ժողովուրդ»<sup>5</sup> (ընդգծումը մերն է—Մ. Մ.):

Հայր Օհանի և Լենկթեմուրի գոտեմարտում «կնքված» պայմանագիրը մեկն է՝ բռնակալը խոստանում է փրկել ընդամենը մեկ վանքաշափ ժողովուրդ, չգիտակցելով, չհասկանալով ծովի վրայով շոր ոտքերով քաջող Մարդու հրաշագործությունը, աստվածայնությունը: Վանքաշափ ժողովուրդը դառնում է մի ամբողջ ազգ և փրկվում է ոչնչացումից: Հայր Օհանի ետևից մարդիկ մտնելով վանքի դռնից ներս, հայր Օհանի հրաշքով էլ վերածվում են ազավնու և դուրս թռչում պատուհանից:

Գրեմ եմ, տեսնում մարդիկն իր զրկած —  
Մեր հայր Օհանը՝ աղոթքի շոքած,  
Աչքերն երկնքին, միրուքն արցունքոտ,  
Ով որ հայ ազգից մըտել է իր մոտ,  
Իր սուրբ աղոթքով, կամքով վերինի,  
Փոխել է իսկույն դարձրել աղավնի,  
Բաց պատուհանից թողել ամենքին,  
Թըռքերը դեպ իրենց լեռները կրկին,  
Ու հիմի վանքում էլ լըկա ոչ ոք,  
Ինքն է աղոթում մենակ, ծընկալոք:

Սրանք վերջին տողերն են, ամփոփումը և ընդհանրացումը, ուր, «Թու-մանյանի հանճարով ստեղծվել է մի ապշելի լուծում, իր լուսնամբ ավելի խոստն ու ներգործուն, քան ամենաբանաստեղծական խոսքերով ասված որևէ վերջաբան: Եվ մենց այս է բանաստեղծի ճանճարը. բանաստեղծարեն օգտագործել անգամ լուսնունը»<sup>6</sup> (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Հավելենք, որ աղոթքն այստեղ ամենից առաջ ունի գաղափարական նշանակություն, այսինքն աշխարհի փրկության, կատարելագործման, ներդաշնակության հոգսերով տարված մարդը հավատարիմ է իր հավատին և ինքնիրեն ու դրանով էլ անպարտելի է և մեն-մենակ է մնացել թշնամու դեմ, որից էլ Լենկ-թեմուրը մեռնում է՝ վարհուրած և հրաշքի առջև՝ անբացատրելիորեն կարկա-մած: Ընդ որում, որոշ սկզբնաղբյուրների մեջ աղավնու փոխակերպված գե-րինները փրկվելով, վերստանում են մարդկային կերպարանքը, գետի մյուս ափին, իսկ թումանյանական մշակման մեջ գործողությունը կատարվում է Սևանի ափին, իսկ մարդիկ ազատությունը գտնում են երկնքում, բնության գրկում:

Գեղարվեստական այս եղանակը, որին դիմել է Հովհ. Թումանյանը,

<sup>5</sup> Հո վհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. չորրորդ, Երևան, 1969, էջ 248—249.

<sup>6</sup> Մայիս Ավագլարեզյան. Թումանյանը և հայ հին դրականությունը.— Թումանյան, Ուսումնասիրությունք և հրապարակումներ, հ. 2, Երևան, 1969, էջ 24.



դրականագիտության մեջ կոչվում է լիտոսա, երբ երևույթը, առարկան այն-քան են փոքրացվում, որ անցնում են անգամ ասեղի ծակով, անհնարինը դարձնելով հնարավոր: Հետաքրքիր է, որ «Քաջ Նազար» հեքիաթում լիտոսան կիրառված է զաղափարական հակառակ իմաստով: Նազարը կոտորում է ճանճերին, ենթադրելով, որ կարող է և մարդկանց այդ նույն կերպ կոտորել: Այս փոխաբերությունը բովանդակության մեջ, հետագա շարադրանքում ստանում է համապատասխան դրսևորում, մինչդեռ «Աղավնու վանքում» լիտոսայի գործողությունն այլ է՝ մարդկանց փրկությունն է: Սա գեղարվեստական փոքրացման-փոխակերպման ճշմարիտ և փրկարար ճանապարհն է: Զկան, բացակայում են արգելքները, հաղթահարվում են անելանելի գործությունները: Կան, գործում են իմաստուն ուժերը, որոնք միաբանելով ժողովրդին, առաջնորդում են ղեպի ազատություն: Սա հումանիստական և հայրենասիրական այն մակարդակն է, որին ստեղծագործողը կատողանում է հասնել իրականությունը խորապես ճանաչելուց և փրկստփալորեն ընդհանրացնելուց հետո միայն, երբ ժողովրդը անվերապահորեն, նույնիսկ բնազդով է հավատում նրան: Հովհ. Թումանյանը հասել էր այդ անհասանելի աստիճանին:

Աղավնու վանքի մասին ավանդության երկարակեցությունը մտածել է տալիս պատմական ինչ-ինչ աննպաստ վիճակների հարատևության մասին, որոնք, ցավոք, մենք դեռևս քիչ ենք հաղթահարել: Այդ իմաստով էլ նաև ույոսը մեզ հուզում է սույն ավանդապատումը: Իսկ ավանդության գրեթե բոլոր տարբերակներում հայր Օհանի, որպես գլխավոր գործող անձի, հիշատակությունը վկայում է, որ, ըստ երևույթին, XIV դարում մեր պատմության մեջ դործել է ազգային մի երևելի գործիչ, գուցե հենց այդ անունով և նա աչքի ընկնող դրական դեր է խաղացել ժողովրդի կյանքում, այսինքն՝ ավանդությունը չի ստեղծվել դատարկ տեղում և դրա ստուգապատում հիմքը եղել է: Անշուշտ, խոսքը ջրերի վրայով քայլելուն կամ էլ մարդուն աղավնի դարձնելու հրաշքին չի վերաբերում, այլ՝ ժողովրդական իմաստուն առաջնորդին և նրա ղեկավարությամբ ոխերիմ թշնամու դեմ պայքարելուն: Ի ղեպ, լենկթեմուրի արշավանքների մասին հիշողություններ են թողել նաև ժամանակակիցները որպես ականատեսներ, տուժողներ: Ահա, օրինակ, Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղէտիցը», գրված 1422 թ.: Ականատեսն է նաև XV դարի հայ պատմագրության ականավոր դմբը, մատենագիր, եկեղեցական գործիչ, վարդապետ և բարոնապետ Թովմա Մեծոփեցին, որն աչպես է բնութագրում լենկթեմուրին. «...այլ մի Թամուր Լանկանուն, դաւանութեամբ և օրինօք պղծոյն Մահմետի՝ Նեոին կարապետի, յայտնեալ երեսացաւ ի յարեւելս և ի Սմրդանդ քաղաքի, անողորմ, անգութ, անազառոյն, լեալ ամենայն չափութեամբ, պղծութեամբ և հեախուք բանաստեղծութիւն սատանայի»<sup>7</sup>: Թովմա Մեծոփեցին նույնպես լենկթեմուրին կոչում է «զպիղծ վիշապն անդնդային», «չար գազան»: Այսինքն այնպես, ինչպես ժողովրդական բանահյուսության մեջ և Հովհ. Թումանյանի լեզբենդում:

Արդ, Հովհաննես Թումանյանը դատարկ տեղում չէր մշակել այսպես ասած լենկթեմուրյան թեման: Այս «համամարդկային շարագործի» երեք արշավանքները Հայաստան պարզապես գրեթե ջնջեցին մեր վաղնջական ազգը, այն ցիրուցան անելով: Ահա Հովհաննես Թումանյանը իր գլխավոր խնդիրը համարել է «ծխտել» հենց այդ իրողությունը և ապացուցել հայ ժողովրդի վերածնվելու և հավերժանալու ոգին: Դա, այո, գալիս էր ժողովրդից, ժողովրդական ավանդություններից, և ազգային մեծ բանաստեղծը գնացել է միակ ճշմարիտ ուղիով: Դա հաստատվում է նաև մեկ այլ առիթով: 1915 թ. «Հորիզոն» թերթի մայիսի 10-ի համարում տպագրվել է նրա «Վան և Երևան» հոդվածը, կապված ուսական գործի առաջխաղացման

<sup>7</sup> Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծօրեցայ. Փարիզ, 1860, էջ 91:

հետ: Եվ հենց այդտեղ էլ XIX դարի սկզբին պարսկական տիրապետության տապալումն ու Երևանի բերդի գրավումը նա համարում է «ասիական բռնակալության սիմվոլ լենկթեմաթի» վախճան: Այս փաստով նա վկայում է XX դարի սկզբի հայոց փրկությունը՝ որպես նախորդի շարունակություն: Իրենից առաջ, ինչպես ասվեց, լենկթեմուրի մասին շատ է գրվել: Թովմա Մեծոփեցին, Ստեփանոս Թոխատեցին, Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը, Սրապիոն Թերղյանը, Պետրոս Դուրյանը գրել էին պատմագիտական ուսումնասիրություններ, բանաստեղծություններ, պատմական ողբեր, պատմական պիեսներ, ուղեգրական ժանրի նյութեր: Մեր ձեռագիր հիշատակարաններում նույնպես քիչ չեն տեղեկությունները:

Ջայն չարութիւնն, որ նա գործեց, դայն ո՞ր լեզու պատմել կարի,  
Թող հողածին մարդ լըհայի՝ ղինչ տեսաք յայս ժամանակի՞:

Կամ էլ, օրինակ, այս նկարագրությունը, դրված բանաստեղծական ձևի մեջ.

Դողան ոսկերքս և սարսըռին,  
Լոյս իմ քաղի, սիրտըս ճմլին,  
Քանզի աչքք իմ տեսանին  
Ողորմագին հարված սոցին:  
Որպես ղոշխարս մորթէին,  
Փոկս ի թիկունք հանէին,  
Ջկէսըս հրով խորովւէին  
Եւ ճենճերովքն ցնծային:

Ժողովրդի հիշողության մեջ թարմ է մնացել արյունոտ պատմությունը, բերքառատ երկիրը ու հողի վերածելը: Եվ սրա կողքին ժողովուրդը հյուսել է վերածնունդի իր գեղեցիկ լեզունը, եկեղեցին առաջադրել է հավատի փրկարար ոգին, ապավինել է բարոյականությանը: Եվ ոչ միայն դրանք: Մեր ժողովուրդը նաև մարտնչել է: Անշուշտ, եկեղեցին էլ իր դերն է կատարել այդ պայքարում, ժողովրդական հերոսներ առաջադրելով քահանաներին, դրանով իսկ ամրացնելով հավատի գաղափարը, ժողովրդի հայացքը կենտրոնացնելով քրիստոնեական հավատի զորության վրա:

Ահա նաև այսպես է ծնվել ազնվաբան վաճառի մասին ավանդությունը կամ հրաշքը:

Մեր բանահյուսության մեջ մաքուր-աղավաղ հարաբերակցությունը, ըստ Ա. Ղանալանյանի, ունի շարունակություն՝ Հազարամյակից կամ Ամենամյակից: Մարդադավնյաց կամ Հազարամյակից վանք մենք ո՞նենք Հին Նախիջևանի Առինջ գյուղի մոտակայքում: Սա ևս մի տեսակ որոշակիացնում է ժողովրդական ավանդության վայրը, նորից ենթադրել տալիս պատմական ինչ-որ հիմքի առկայությունն առհասարակ մեր բանահյուսության մեջ: Գրեթե նույնակերպ են պատմվում Ալիիվանքի (Հովհաննավանք) և Մոկսի Ամենամյակի փրկիչ ավանդությունները: Հովհաննավանք ունենք նաև Արաղածոտն գավառի Կարբի գյուղից մեկ կիլոմետր հարավ-արևելք, Քասաղի կիրճի բերանին: Կարո Ղաֆաղարյանը, որ 1948-ին հատուկ գիրք է հրատարակել այդ Հովհաննավանքի մասին, մանրամասնորեն հետազոտելով նրա պատերի մի քանի տասնյակ վիմական արձանագրությունները, շեշտել է, թե դրանք կարևոր աղբյուր են XII—XIII դդ. մշակույթի և պատմության համար: Ի դեպ, Հովհաննավանքը դեռևս V դարից սկսած Հայաստանի ուշադրության արժանի վանքերից մեկն է եղել, որտեղ, հավանաբար, իր վանահայրության տա-

<sup>8</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 587:



րիններին, կյանքի վերջին շրջանում ծերունաշարդ Ղազար Փարպեցին հյուսել է իր «Հայոց պատմությունը»:

Այնուամենայնիվ, ժողովրդական երեակայությունն առանց հիմքի չի լինում և Լեւկիթեմուրիս դիմադրելու հեքիական էջերը կան հայոց պատմության մեջ: Ուրեմն, մի կողմից այս հանգամանքը, իսկ մյուս կողմից քրիստոնեական հավատի վիթխարի ազդեցությունը ներհուսվել են իրար և կերտվել է հրաշքը՝ վեպի տաղանդ ալիքների վրայով քայլող և մարդուն աղավնի արձնող, ժողովրդին փրկող առաջնորդն ու բռնակալին հաղթելու հրաշքի կամքը:

Իսկ ինչ վերաբերում է աղավնուն, ապա հայ ժողովրդական բանահյուսության մեջ այս թռչնի կերպարը դալիս է հնագույն ժամանակներից: Մեր պատմիչներից Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին, իմաստասեր Էջմիթ Անհաղթը, ուրիշներ մեծարել ու փառաբանել են այս թռչունին: Այն իր տեղն ունի հայ միջնադարյան զարդարվածություն և նկարչության մեջ: Որպես սուրբ հոգու խորհրդանիշ աղավնին սովորական է արդեն մեր հին ավետարաններում: Այն դովարանված է մեր միջնադարյան ժողովրդական երգերում և տաղերում: Աղավնին հայ դիցաբանական մի դրույցում հանդես է գալիս որպես ժողովրդի կարեկից և սգում երկրում երաշտի պատճառով առաջացած համատարած անբերրության համար: Այո, շատ են այս թռչնի շուրջ հյուսված իմաստուն և դեղեցիկ պատմությունները, որոնց փառքն ու պսակը Աղավնու վանքի մասին ավանդությունն է:

Նույն տապանի պատմության մեջ նույնպես փրկարար ավետաբեր ձիթենու ճյուղ բերող և ազդավի հետ պայքարում լեզուն կորցրած օրհնյալ աղավնին է:

Ավետաբեր աղավնու-թեման կա նաև «Գիլգամեշում», իսկ ըստ Դիոդորոս Սիկիլիացու, Շամիրամը, զգալով իր իշխանության անկումը, այն հանձնում է որդուն՝ Նինոսին և փոխակերպվելով աղավնու, թռչում-հեռանում է իր տանը թառած բազմաթիվ հավերթի հետ: Այդ պատճառով էլ ասորեստանցիները իբրև աստված են պաշտում աղավնուն, այդպիսով անմահացնելով Սեմիրամիսին՝ Շամիրամին: Վերակենդանացման, վերափոխման առաստիղը, որ կապվում է գարնան, բնության զարթոնքի հետ, բնության երևույթների միջով անցել է մաքրկանց, որոնք միաբարձրաբան են որոնել կյանքի վախճանից խուսափելու, դա հավերթությանն առնելու համար: Եվ աղավնին այդ հարաբերության մեջ պատմավոր տեղ է գրավել: Այս թռչնին առնչվող պատմություններն ունեն համաշխարհային տարածում: Ձի կարելի չհիշատակել Հիսուս Քրիստոսի-մանկության տարիներից այն ողմազը, երբ Հիսուսը կավից իր սարքած ճնճղուկները մեկ անգամ սփռեց՝ ափին դարձնելով և «թռեց» ասելով դարձնում է թռչուններ և իր այդ հրաշքով շրջանում շրջապատի մարդկանց: Ձի կարող այնպես պատահել, որ սա դուրս մնար քրիստոնեական շատագույությունից և լայն տարածում չգտներ:

Վաղնջական է, այո, աղավնուն վերաբերող բանահյուսությունը, մասնավորապես փոխակերպման եղանակով նրան առնչվող բարերարությունը: Սակայն աղավնու մասին լեզենդի հեռավոր արմատները գտնվում են Արեւելքում, հին Հնդկաստանում, Միջագետքում (շումերա-աքադական գրականություն): Վեդայական գրականությունը հրամցնում է մի հարուստ շտեմարան՝ մտքերի, գաղափարների, անհատի և հասարակության, օրենքի և բռնակալության, կյանքի և մահվան, իմաստավորված ապրելու և ունախնության, խղճի և ազատության, երկրի և տիեզերքի, մի խոսքով ամենամեն ինչի մասին, սկսած առօրյա կենցաղային հոգսերից մինչև ամենավեհ խոհրդ: Ահա վեդայական գրականության մեջ հնդկական դիցարանից Ագնի՝ կրակի, ընտանեկան օջախի, զոհի, խարույկի աստվածը, որը նաև մարդկանց և աստվածների միջնորդն է: Ի դեպ, հայ իրականության մեջ էլ աղավնին ամուսնասեր է, հավատարիմ ընտանեկան օջախին, իրեն խնամողներին, ողջախոհ է: Նա թռչնակերպ նախամոր գաղափարին է կապված «Հանգիստ», № 1—2:

վում, մայրիշխանություն շրջանին և ինչպես դիտարկել է Աս. Մնացական-յանը, մարդագլուխ թռչունների կամ թռչնամարմին մարդկանց հարաբարդ-ված պատկերը պատահականություն չէ: Սա պարզ աղերս չէ, ունի էական հիմքեր և ստորև կտեսնենք այդ ամենի նշանակությունը հայոց համար: Մեզ, հայերիս, հաճախ են համեմատում վերածնվող փյունիկ թռչնի հետ, բայց եզրպատգիներից և հույներից առաջ այս առասպելը հայտնի է եղել հին հնդկներին և հենց Ագնիի օրինակով, որը ծնվում է քեֆե իրենից: Նրա ծնողներն են երկիրը և երկինքը: «Ավեստայում» նույնպես նման աղերսներ կան: Արա Գեղեցիկի և Շամիրամի լեզենդը դարձյալ այդ արմատներից է գալիս, ինչպես նաև հետագայում՝ Քրիստոսի համբառնումը: Իսկ «Գիլգամեշում» համաշխարհային ջրհեղեղի նկարագրության մեջ, փրկարար տա-պանից աղավնի է բաց թողնվում:

Աղավնու վանքի բանահյուսական նյութին առնչվում է Յայսմաուրֆից հետևյալը. «Եւ քանզի (Գրիգորը) ամենայն փութով ջանայր ուղղել զխաւե-գաւեալ կաթաւաւորութիւնս եկեղեցւոյ՝ լաջադկոտք ոմանք շարախօս եղեն զնմանէ առ եպիսկոպոսունս և իշխանս, և կոչէին զվարդապետն ճշմարտու-թեան՝ ծայթ և հերձուածող: Եւ նոքա ժողովեալ ի մի վայր՝ առաքեցին զո-մանս առ սուրբն, զի առեալ բերցեն զնա յատեան նոցա: Ապա հետեւում է ավանդությունը տապակած աղավնիների մասին, երբ Գրիգոր Նարեկացին կատարում է թռչունների վերակենդանացման հրաշքը, իսկ և իսկ նման հե-տագայում լայն տարածում գտած աղավնու վաւերի սյուսեին. «Եւ իբրեւ եկին արքն՝ գիտացեալ երանելոյն եթէ կամին տանել զինքն առ ի դատել, ասէ՝ նախ կերիցուք հաց, և ապա գնասցուք: Եւ ետ տապակել զերկուս աղանիս և դնել առաջի նոցա. և էր օրն ուրբաթ: Ընդ որ առաւել ևս գայթակղեալ՝ հա-ւաստի զբանս զրպարտացն համարեցին. և առեն՝ վա՛րդապետ, ո՛չ է օրս ուրբաթ: Եւ սուրբն իբրեւ յանգէտս եղեալ ասէ՝ ներեցեք, եղբա՛րք, չգիտու-թեամբ արարի, և զաղավնիսն ասէ՝ արի՛ք գնացէ՛ք ի տեղիս և յերամս ձեր՝ զի պահք է օրս. և նոյն ժամայն կենդանացան աղանիքն և թեւաւորեալ թը-ռեանս: Դա տեսնելով, Գրիգոր Նարեկացու թշնամիները ահաբեկ եղեալ լոռեցին»<sup>9</sup>: Ի դեպ, այս պատմությանն անդրադարձել է նաև ռուս նշանավոր թանասեր, ակադեմիկոս Սերգեյ Ավերինցևը «Մատյան ողբերգություն»-ի ռուսերեն 1988 թ. հրատարակության իր առաջաբանում, ընդգծելով հայ հանճարի ատելությունը բռնակալության նկատմամբ և նրա ազատախոհու-թյունը և հաղթանակը շար ուժերի նկատմամբ<sup>10</sup>:

Ամենուր և ամեն ինչում ընդգծվում է ժողովրդի հաճերժության գաղա-փարը, մահին հաղթելու մարդկային տենչանքը, բնության պես հավերժ լինելու գաղափարը:

Այս գաղափարներն էին, որ դրեցին հայ գրողներին դիմելու հնդկա-կան մեկ այլ թեմայի՝ ոսկի քաղաքի պատմությանը: Ուշագրավ է, որ հենց Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանն էին դրա լավագույն իրա-կանացնողները և որ այս երկու Մեծերը «Ոսկի քաղաք» հեքիաթները գրեցին գրեթե միևնույն ժամանակաշրջանում, 1909—1912 թթ.: Սա նույնպես ժա-մանակի թելադրանքով էր: Նրանք ճանապարհ, ելք էին որոնում ժողովրդի համար. «Աղավնու վանքում» գա վաւերի լուսամուտն էր, իսկ «Ոսկի քա-ղաքում»՝ երանելի և հեռավոր երկիրը: Որոշ ժամանակ անց Ավետիք Իսա-հակյանն անդրադարձավ վեդայական մեկ այլ նյութի՝ Ուշիեաւայի ավան-դությունը, որտեղ անգղից (փոխակերպված Ինդրա աստված) փրկություն է հայցում աղավնին (փոխակերպված Ագնի աստված): Փրկարարը Ուշինա-րան է, որը արդար և իմաստուն դատավոր է և միջնորդ է հանդես գալիս

<sup>9</sup> Յայսմաուրֆ, Կ. Պոլիս, 1834, էջ 99:

<sup>10</sup> С. С. Аверинцев. Роскошь узора и глубины сердца. Поэзия Григора: Нарекади. См. Григор Нарекади. Книга скорбных песнопений, М. 1982, с. 13.



ուժեղի ու թուլի միջև և միմիայն անձնագոհության մեջ է փոխվում թուլին՝ Աղանի-աղավնուն։ Փրկությունը կայանում է միայն այն ժամանակ, երբ փերթ-փերթ իր իսկ ձեռքով իր մարմինը հեշտոտած Ուշինարան տեսնելով, որ իր մարմնից կտրած միսը աղալնուց թևիվ է կշռում, ամբողջ մարմնով է կանգնում ձեռքներով իջեցված կշռքի նժարին՝ աղավնուն անզղի ճանկերից աղառնելու համար։ Փոխակերպության միջոցով այս գաղափարի առաջընթացումը, սակայն, դուրսից աշխատանք չէ։ Աղատությունը արտի նվաճել և պաշտպանել կյանքի գնով։ Եվ եթե «Աղավնու վանքում» ժողովուրդը՝ մեծը շատ է փոքրանում-փոխակերպվում-փրկվում, ապա վեղալական պատմության մեջ հանճարեղորեն արժեքավորվում է փոքրի՝ աղավնի-Աղանի Ուշինարային աննշան թվացող, սակայն ըստ էության ծանր քաջը, որը, ինչպես սյուսիի ընթացքն է ցույց տալիս՝ կշռքի վրա հավասար է մարդու քաջի։ Այստեղ էլ փոխակերպումը հարստացված է մեկ այլ խորիմաստ գաղափարով։ Այս փոխակերպության լուսման ընթացքում Ուշինարայի արաբը վեր է ամեն մի հերոսությունից, ինչպիսին որ հայկական հայր Օհանի հրաշքն է, երբ կերպարն այնպես վարպետորեն ու նրբորեն է հյուսել Հովհաննես Թումանյանը, կարծես թե չհնոսանալով ժողովրդական հենքից, սակայն ավելացնելով շատ կարևոր մի գիծ. ամբողջ ժողովուրդը՝ մեծը, ժամանակավորապես փոքրանալով՝ փրկվում է, իսկ հայր Օհանը մնում է վանքում և միայնակ աղոթում, այսինքն պատրաստ է իր կյանքով հատուցելու հայության փրկագինը։ Սա էական հավելում է, որը չկա Աղավնու վանքի ավանդության մի շարք տարբերակներում, բացի Մոկսի մոտ գտնվող Ամենափրկիչ վանքի Բ տարբերակից։

Ուրեմն, Հովհ. Թումանյանը ծանոթ է եղել շատ տարբերակների Ա. Ղա-նալանյանը համամիտ է Հովհ. Թումանյանի երկերի առաջին հատորի (1950) էջ 334—336-ում ծանոթագրվածին, ըստ որի, ավանդությունը, որ չափածո մշակման է ենթարկել բանաստեղծը՝ «Հովհանավանքին» էլ նույնն է հաստատվում նաև Հովհ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի 2-րդ հատորի ծանոթագրությունում (1990, էջ 565), ուր ասված է, թե բանաստեղծն ավելի շատ օգտվել է Չամչյանի գրքից (էջ 880—882) և նկատի է ունեցել Ավգուստ Ֆոն Հաբստհաուզենի տարբերակը, թանի որ միայն այն-տեղ է հիշատակվում Սևանա լիճը, իբրև այն վայրը, որտեղ կատարվել են գեպորները։

Գրականագետ Նիկոլ Աղբալյանը, որ Հ. Թումանյանի «Աղավնու վանքի» մասին ուղագրավ քննախոսություն է հրապարակել Բոստոնի «Հայրենիք» հանդեսի 1947 թ. № 3-ում, մասնավորապես գրել է. «Ո՛ր է լսած այս ավանդությունը. և հետո՞ լսած է թե կարդացած, իրավա շրջանում, ուր ան-ցած է նրա մանկությունը, որքան գիտեմ ժողովուրդը այդ տեսակ ավանդություն չունի ժողովրդական նյութերի հավաքածուների մեջ ես չեմ հանդիպած այդ ավանդության։ Կարծում եմ, «Աղավնու վանքի» աղբյուրը գրավոր է. Հ. Թումանյանն իր գրադարանի մեջ ուներ հ. Մ. Չամչյանի Հայոց պատմությունը, որ երբեմն սիրում էր թղթատել։ Եվ ապա Ն. Աղբալյանը մեջբերում է պատմաբանի աշխատությունից այդ ծավալուն քաղվածքը գրաբարով և աշխարհագրով՝ իր թարգմանությամբ, ասելով, որ ուրիշ այլ աղբյուրների ինքն անծանոթ է և չի կարող պնդել, թե բանաստեղծն ի վերջո ինչի՞ց է օգտվել, կարծելով, որ շատ ավելի չամչյանական է լեզենդի մշակման թումանյանական աղբյուրը։

«Աղավնու վանքը» գրելուց շատ առաջ, 1894 թ. Հովհաննես Թումանյանն սկսում է գրել «Դեպի Անհունը» պոեմը, որի վրա, ընդմիջումներով, աշխատում է մի քանի տարի, մինչև 1903 թ.։ Ահա այդտեղ էլ նա առաջ

11 Ս տ է փ ա ն Զ ո Ր յ ա ն. Թումանյան. — Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երե-վան, 1969, էջ 121.

է քաշում աղավնու թեման, այդ միջոցով արտահայտելով կլանքի և մահ-  
վան մասին իր պատկերացումները.

Հասմիկն երազում աղավնի դառավ,  
Աղավնի դառավ՝ իմ ձեռքից թռավ...

Սա ուշագրավ մի մանրամասն է և վկայում է թումանյանական ստեղ-  
ծագործական լաբորատորիայում մարդ-աղավնի փոխակերպության գաղա-  
փարի կայունությունը, ցույց տալիս հետագայում դրան անդրադառնալու  
ոչ պատահական լինելը։ Նկատենք, որ «Դեպի Անհունի» առաջին տարբե-  
րակի վերնագիրն էլ եղել է «Ճերմակ աղավնի»։ Այդ հետո է բանաստեղծը  
վերամկրտել իր պոեմը։

Վանքի, հայր Օհանի և աղավնու մասին լեգենդը ներկայացնում է հայ  
ժողովրդի տառապանքները, նրա դժվար ճակատագիրը, որին էլ, ընավ ոչ  
պատահականորեն, ձեռք մեկնեց աղգալին մեծ բանաստեղծ Հովհաննես  
Թումանյանը։ Դա 1912 թ. էր։ Մի քանի տարի անց պայթելու էր համա-  
ժողովրդական աղետը, սանձազերծված թուրքերի կողմից։ Ստեփան Զոր-  
յանն իր հիշողություններում պատմում է, որ ադժնի օրերին Թումանյանն  
ինձ հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին։ Հայր Օհանի պես նա  
պատրաստ էր նոր լեկթեմուրների ձեռքից փրկել բոլոր գերիներին, որ գնան  
«ու ազատ իրենց կյանքի ձենն ածեն...»<sup>9</sup>։

Իսկ նվարդ Թումանյանը գրել է. 1915 թ. «Օգոստոսի 19-ի գիշերն-  
էր, Արարատյան դաշտի անմոռանալի, ծանր գիշերը...

Փոթորիկ, կայծակ, որոտ... Երկինքը հանկարծ մթնեց, սևակնեց, սև  
մութ ամպերով ծածկվեց, ու սկսվեց հորդ անձրևը։ Գաղթականությունը բաց  
երկնքի տակ էր։

Հայրիկը սև թիկնոցով, կեպին գլխին շտապ դուրս եկավ իր սենյակից.  
գաղթականությունը շինքերում պատսպարելու։

...Հայրիկը թիկնոցի մեջ փաթաթված տեղատարափ անձրևի տակ առաջ  
էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կա-  
պոցներով, երեխաներով, նույնիսկ հարազատների դիակներով ... Սարսա-  
փելի տեսարան էր...

Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհա-  
նին...»<sup>10</sup>։

Ի դեպ, ժողովրդական բանահյուսության միևնույն հիմքը կա նաև Դե-  
րենիկ Դեմիրճյանի «Լենկ-Թիմուր» պոեմում, գրված 1905—1911 թ.։ Պոեմի  
իննսունամյա Օհանը նույնպես մտատանջվում է հայրենիքի ճակատագրով և  
աղերսներ ունի թումանյանական հայր Օհանի հետ։

Արդեն ակնարկվեց, որ աղավնու կերպարը մարմնավորվել է հայոց  
ճարտարապետության մեջ, գեղազարդել մեր տաճարների, եկեղեցիների,  
վանքերի բարձրաքանդակները։ Բայց թե ոչ միայն այդպես, այլև զուտ  
վերականգնանքաման, փոխակերպման առումով աղգալին ճարտարապետու-  
թյունը հուշում է ժողովրդական մտածողության նույնությունը։ Այսպես, կո-  
թողներով հարուստ պատմական Արցախը՝ Լեռնային Ղարաբաղը, նույնպես  
ահագին նյութ է տալիս մեզ հետաքրքրող թեմայի մասին։ Արցախի Մուր-  
տունու շրջանում է գտնվում Ամարասի վանքը, որը, ըստ հայ հին մատե-  
նագրության տվյալների, հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը։ Այս վանքի  
ճակատագիրը, նրա մասին ստեղծված ժողովրդական ավանդությունը շատ  
բանով է նման Աղավնու վանքի մասին ավանդությանը։ Հաճախ է խոսվել  
ու գրվել Ամարասի մասին, բայց ներկա պարագայում խնդիրն այլ է։

Ե՛վ ժողովրդական ավանդություններում, և՛ թումանյանական մշակման  
մեջ գործողությունը տեղի է ունենում վաճառում, այսինքն այնտեղ, ուր աղո-

12 Նվարդ Թումանյան. Հուշեր և զրույցներ. Երևան, 1968, էջ 241։



թում են առ Աստված: Սա հավատի վայր է, ուր շորս կողմը, վերև և ներքև սրբություն է, պղծված ոչինչ չկա: Ահա այդ գերհզոր ուժն էլ վերակերտում է մարդու հոգին, դառնությունների, դժվարությունների, աղետների, կործանումների ժամանակներում ապրելու հավատ տալիս, նրան մեծ հույս ներշնչում, թևեր տալիս՝ թռչելու համար: Տվյալ դեպքում՝ հոգևոր թռիչքը՝ մարդաշավին՝ մարդ անցումը հավասարազոր է հավատի և հույսի, այսինքն՝ փրկություն է: Գեղարվեստական գլուխը Ամարասի վանքի լեզվագիտական փարակաճ խոր արմատներ ունի, որը մի կողմից բխում է քրիստոնեությունից, բայց մյուս կողմից էլ գալիս է Ազնի ասածու պաշտամունքից՝ տան, օջախի, ճշարտություն, արդարություն, փրկություն, անձնազոհության անսահման վեհ գաղափարից: Քրիստոնեական ուսմունքը հենց այսպիսի գրկալու՝ Հիսուս Քրիստոսի հրաշագործությունների՝ լճի վրայով քայլելու, կավե ճնշողիկը թռչուն դարձնելու և խաչման ու համբարձման կետում էլ առնչվում է համամարդկային սրբազան երազանքին, որը կար դեռևս հնդկական հիցարանություն, Այդ հիցարանում Ազնի աստվածը, որն աղերսվում է մեր Վահագնին, այն սրբազան երազանքն է, որը ոգևորել է մեզ Ավետիք Իսահակյանին: Ուրեմն՝ վանքը, տաճարը աղավնու տունն է, օջախը, նրա սրբացման, նրա գլխավոր գործողության վայրը: Ահա այս խոհն է մղում դեպի Ամարասի վանքի ավանդությունը, որը նորից առնչվում է բունական լեզվագիտության:

Արամ Ղանալանյանի «Ավանդապատումում» եղած Ամարասի ավանդությունը մի քանի տող է ընդամենը. «Լենկ-Թեմուրն այստեղից մինչև Արաքս դիտոր կողք-կողքի կանգնեցրել է իր զինվորներին, կարգադրելով մեկ-մեկ տեղահան անել վանքի քարերը և ձեռքից-ձեռք տալով թափել գետի մեջ»: Այո, այսքանը: Բայց ավանդությունն ունի ժողովրդական իր շարունակությունը, որի համաձայն բռնակալի հեռանալուց, չքվելուց հետո քարերն իրենք անմիջապես հավաքվել են և յուրաքանչյուրը բռնել է իր տեղը, վերականգնելով Ամարասի վանքը:

Սակայն հայ բանահյուսությունը լենկթեմուրին միայն հեռանալու ճամփա չի տվել: Մի շարք ավանդություններում, այո, չի խոսվում նրա մախանի մասին: Մինչդեռ մեկ տարբերակում, որը Մոկսի ավանդությունն է, ասվում է, թե հրաշքով ժողովրդի ինքնափրկությունը, տեսնելուց հետո սարսափահար բռնակալը իր զորքով փախչում է, ճանապարհին գլխին կարկուտ է թափվում. «Բիրդաղի սպանեց, մեկ լե չպրծավ»:

Այս խորհուրդը նույնպես հարկադրում է մտածել արցախահայության պատմական ճակատագրի, նրա ապրելու հավատի մասին:

Մեր բանահյուսությունը նաև այլ տարբերակներ է ունեցել, կապված լենկթեմուրի արշավանքների հետ, որոնցում բռնակալը հանդես է գալիս այնպիսի հատկանիշներով, որոնք աղերսվում են Հովհաննես Թումանյանի մշակած տարբերակին, միաժամանակ հեռանալով նրանից և ստանալով զարգացման նոր ճյուղավորումներ: Այսպես, «Սվարանց» ավանդությունը, որ Ա. Ղանալանյանը դասել է ստուգաբանական-բացատրական տեսակների շարքը, ուշագրավ եզրեր է ի հայտ բերում. «Սվարանցում», ի շարս այլ աշխարհագրական կետերի, շեշտվում է նաև վաճճը, եթե սյունեցիներն տեսնելը գտնվում են բարձր ժայռերում, իսկ բերդերը՝ նրանցից էլ բարձր ու անառիկ տեղերում, ապա վանքերը ամպերից էլ վեր են: Ուրեմն, կարևորվեց աղոթատեղին, հավատի օջախը և լենկթեմուրին խորհուրդ տրվեց հեռու մնալ սյունեցիներից, նրանց հաղթել չի կարելի: Հաջորդը. «Սվարանցում» նույնպես ներկա է տարեց մարդը, որը ճշմարիտ խորհրդատու է՝ չհարձակվել Սյունիքի վրա, բայց ժողովուրդը մի հանձարեղ պարզությամբ իմաստությունն իր մեջ կրող անձնավորությանը բաժանել է երկու մասի՝ առաջինը խորհրդատու ծեղ զինվոր, իսկ երկրորդը՝ մորթապաշտ, դուրահավատ և, ինչու չէ, նաև ընդհանուր ճակատը դավաճանող գյուղացիներին խարանող, անիծող, ցմահ և նաև ետմահու դատապարտող վարդապետ է,

առն էլ փոխում է այդ գյուղի անունը (ավանդության մեջ նախկին անունը չի նշվում, այսինքն՝ արժանի է մոռացության) դնելով սև մարդկանց գյուղ՝ Սվարանց, նվ եթե Օհանավանքի ավանդությունում վանահայրը բանակցում է բռնակալի հետ և հավատի զորություն մը հաղթում, ապա «Սվարանցում» բացակայում է հավատը և կենկթեմուրի շուրջ խոստումներին հավատացող և ապա ողջ-ողջ իրենց իսկ փորած խանդակներում թաղվող գյուղի բնակիչները հավատորացներ են, ավանդության գլխավոր գաղափարն ուրացողներ. վարդապետն է նրանց դատապարտում, որն իջել էր Սյունյաց ամենաանառիկ ժառերի ամենաանհասանելի վանքից՝ ամպերից էլ վեր։ Սա հավատի վճիռն է, դատապարտումն է՝ իրեն դավաճանողներին։ Այսպիսով, բախվում են տրամադճորեն տարբեր մոտեցումներ, միաժամանակ լրացնելով միմյանց։

Դարերի մեջ ավանդության այդ ոգին ամրապնդվել է քրիստոնեական եկեղեցու կողմից և փառաբանվել է հավատի ներկայացուցիչը։ Ժողովուրդըն էլ հավատի միջոցով նույնի դոնե՝ է բացել իր հավերժության համար։ Հովհաննես Թումանյանը գեղարվեստական ձևի մեջ հանդերձալորելով այն, իր ապրած դաժան ու դժնի օրերի հայացքով մի նախ լույս է ճառագել հայ ժողովրդի համար։ XX դարի սկիզբն էր։ Մեր օրերում, երբ արդեն վերջանում է այդ դարը և ամփոփվում է երկրորդ հազարամյակը, ժողովրդական մտածողությունը ստանում է նորովի ընկալման հնարավորություն։ Այս իսկ առումով էլ կարևորել ենք ցանկանում նիկոլ Աղբալյանի գրականագիտական քննությունը, արված շուրջ կես դար առաջ, որը նաև մտահոգության արտահայտություն է մեր ժողովրդի գոյության մասին։ Բանահյուսական այս գոհարը կարիք ունի ավելի լայն համեմատական դիտական քննության։ Դա է պահանջում մեր գրականության շահը։